

նարկ լինել մեր ուսումնարանների աշակերտներին, Նա շատ թէ քիչ կարող է պիտանի լինել ուսուցիչների համար, որոնք զգուշութեամբ

զործածելով՝ կարող են տեղ տեղ օգտակ նորա ծանօթութիւններից և բառարանից:

ԱՊ. Մուշեղեան:

ԲՈՍԿՈ, «Քիմիա 36 նկարներով» (տարրական ձեռնարկների սերիա).
Թարգմանեց Ա. Մելիք-Ալլահվերդեան: Հրատ. Թիֆլ. Հայոց գրքերի
Հրատ. Ընկ. Գինն է 40 կոպ.

Երբ դեռ մեր թեմական ուսումնարաններում չէ դասաւանդուած քիմիա և ուրեմն անմիջապէս ժողովրդի հետ շփուող ինտելիգենցիան՝ մեր ժխական ուսուցիչները և քահանաներն էլ զուրկ են մնում քիմիայից ամենատարրական և անհրաժեշտ տեղեկութիւններ տոանալուց, — Հրատարակչական ընկերութեան արածը պէտք է նկատուի իբրեւ մի շատ ժամանակապահար և օգտակար գործ: Այդ գործը մի լալանի եւրոպական գիտնականի ¹⁾ քիմիայի հանրամատչելի ձեռնարկի թարգմանութիւնն է, որ նպատակ ունի ծանօթացնել ընթերցողին կրակի, օդի, ջրի և հողի հետ, թէ ինչ բան է կրակը, թէ ինչ է օդը և ինչ ազդեցութիւն ունեն կենդանիները և բոսորը նորա վերայ, թէ ինչ զանազանութիւն կալ ծովի և աղբիւրի

ջրի, կոշտ և կակուղ ջրի մէջ և ալն և ալն, — սոքա աշակերտի հարցեր են, որոնց մասին եթէ ոչ ամբողջ ժողովրդին, գէթ նորա առաջնորդներին (ուսուցիչներին և քահանաներին) մի քանի անհրաժեշտ տեղեկութիւններ հաղորդելու պարտաւորութիւնը վաղուց է որ ծանրանում էր մեր բարձրագոյն կրթութիւն ստացած ինտելիգենցիայի վերայ: Ահա այդ պարտաւորութիւնն է որ կատարել է Հրատարակչական ընկերութիւնը: Բայց ըստ մեզ գրքուկի հրատարակելով դեռ չէ կարելի բանը վերջացած համարել: Դիշտ է, Ռուկօի քիմիան ալնքան մատչելի է, փորձերը ալնքան տարրական որ փոքր ի շատէ նախապատրաստած ընթերցողը բաւականին բան կարող է քաղել նրանից, բայց փորձնական գիտութիւնները առհասարակ և քիմիան առանձնապէս, որքան որ տաղտկացուիչ և դժար ըմբռնելի են մեռած գրքում, ալնքան զրաւիչ և պարզ են կենդանի խօսքի միջոցով աւանդակիս և փորձերով բացատրակիս: Այս պատճառով ցանկալի է, որ քանի դեռ մեր թեմական դպրոց-

¹⁾ Հենրի Բոսկօ (Henry Enfield Roscoe), անգլիացի քիմիկոս, ծնւած 1833 թ. Լոնդոնում, 1858-ից պրոֆեսոր Մանչեստրում. գրել է՝ «Քիմիայի համառօտ դասագիրք», «Քիմիայի ընդարձակ դասագիրք»:

Ման. Խմբ.

ներում քիմիալի առանձին դասեր չը կան՝ բնագիտութեան ուսուցիչները լանձն առնէին կարդալ մի ալդպիսի փոքրիկ կուրս բարձր դասարանների աշակերտներին, ցոյց տալով հարկատու փորձերը: Մենք հաւատացած ենք, որ եթէ ալդ ուսուցիչները իրանց դասերին չառկացրած ժամերը զոհել չ'ուզենալով, ամբողջ տարւալ ընթացքում մի քանի ոչ-դասական ժամեր նշանակեն ալդ նպատակով, աշակերտները ուրախութեամբ կը լսեն և նպատակը իրագործւած կը լինի: Ինչ ասել կ'ուզի որ ուսումնարաններից դուրս էլ կարելի է իրագործել այս առաջարկութիւնը, նամանաւանդ որ հարկատու փորձերը մեծածախսերիցը և դժարներիցը չեն:

Թարգմանութեան արժանաւորութիւնների և պակասութիւնների մասին խօսելուց առաջ անկարելի է մատնացոյց չ'անել մի սխալ պրինցիպի վրայ, Թարգմանիչը, որպէս երևում է, ուզում է հետեւել Մխիթարեաններին գիտական տերմինների նկատմամբ: Թէ որքան անտեղի է արդէն ընդունւած և վաղուց գործածական դարձած օտար բառերի տեղ գործածել նորաշնար, բայց միևնույն ժամանակը նոյնքան անհասկանալի հախրէն արմատներից կազմած բառեր, ալդ մասին մենք մեր կարծիքը չալտնել ենք հ. Գաֆտանի («Տարրաբանութեան» առիթով («Մուրճ» 1892 № 4): Մթթէ օրինակ աւելի հասկանալի է մի որ և է «լուսածին» քան մեզ բոլորիս չալտնի ֆոսֆորը, «ծորին» քան ֆլուոր, կամ ինչ կարիք կալ ամենին

չալտնի և հասկանալի «կարտոն» խօսքի տեղ դնել անչալտ և անհասկանալի «ստուարաթուղթ»¹⁾ քանի որ ալդ «ստուարաթուղթը» հասկանալի անելու համար կողքին դնում է կարդոն (ալտինք կարտոն=carton): Բայց Մխիթարեաններից ընդունւելով նորակազմ բառեր ուր որ նրանք պէտք չեն, թարգմանիչը չէ օգտւել նոյն Մխիթարեանների կազմած մի այլ բառով, երբ նա մի մեծ ծառալութիւն արած կը լինէր իրան, ազատ պահելով մի խոշոր սխալից: Բացատրեմ ասածս. վաղուց արդէն չալտնի է, որ alliage'ը (ռու. сплавы) հասարակ խառնուրդ չէ (mélange=ռուս. смеси), այլ զանազանում է այս վերջինից իւր չատկութիւններով: Արդ ալդ alliage'ի համար Մխիթարեանները գործ են ածում չարազոք բառ և դորանով որոշում են alliage'ը mélange'ից. առաջինը չարազոք է, իսկ երկրորդը խառնուրդ: Եւ հէնց հարկատու էլ է, անպակման հարկատու է զանազանել մէկը միւսից, քանի որ նոյն բանը չեն նշանակում alliage և mélange կամ сплавы և смеси բառերը:

Սխալ է Թարգմանած գրքովի հէնց առաջին նախադասութիւնը. «կրակ, օդ, ջուր, հող, — ահա առիկ չորս մարմին...»: Մի ուրիշ տեղ էլ (եր. 65) կրկնելով Թէ կրակը պարզ մարմին է, իսկոյն և եթ թարգմանիչը

¹⁾ Գաջրեղունու «Բառգիրք արվեստից և գիտութեանց» carton թարգմանում է քարդէն, իսկ «ստուարաթուղթ» մինչև անգամ իբրեւ նորահնար բառ էլ չէ բերում:

Ջրում է իւր ալդ սխալ կարծիքը, աւելացնելով թէ «կրակն ալն տաքութիւնն է, որը... և ալն, Ուրեմն դուրս է գալիս որ տաքութիւնը մարմինն է (!)...

Մի անգամ էլ ճիշտ թարգմանութիւնն է սխալմանքի պատճառ դարձել, Նոյն սխալը կալ և՛ ռուսերէն թարգմանութեան մէջ, որից ըստ երևութիւն և թարգմանած է հակերէնը, Մեր խօսքը երես 24-ում «տաքութեան քանակութեան» վերաբերակ դատողութեան մասին է, որ հիմնովին ծուռ է:

Հեղինակը երեւի խօսում է բարդ մաթիմաների ալապէս կոչւած «կազմելու տաքութեան» մասին (тепловые образования), իսկ ռուս թարգմանիչը, որին հետեւելով և պ. Մելիք-Ալլահվերդեանը, երկրորդ տերմինի տեղ առաջինն են դրել, ալսինքն «կազմելու տաքութիւնը» չիօթել է «տաքութեան քանակութեան» հետ: Յամենայն դէպս ալդ կտորը իւր ալփման թարգմանութիւնով ալնքան անհասկանալի է որ կարելի էր առանց խղճի խալթոցի բոլորովին դուրս ձգել:

Յետո՛ւ Нашатырный спиртъ (ammoniaque liquide) թարգմանիչը ընդունել է գազի տեղ, և թարգմանում է աննշադրական գազ. բայց չափոնի է որ ալդ մաթիմը գազ է, ալ հեղուկ:

Թարգմանութեան անշտութիւններից լիշատակենք մի ուշադրութեան արժանի կուրիոզ, 114 երեսում թարգմանիչը իրանից աւելացրել է մի նախադասութիւն, որ չը կալ բնագրում և ալդ նախադա-

սութիւնը թիւրիմացութեան արգասիք է: Խօսքը «կալիոնի երկաթախաժուկի» մասին է որի համար առած է թէ «ալս աղը շատ վտանգաւոր թոյն է» — մինչդեռ «ալդ աղը» վտանգաւոր թոյն չէ: Շատ վտանգաւոր թոյն է մի ուրիշ աղ — կալիոնի ցիանատը (խաժատ են թարգմանում Մխիթարեանները) և ալդ է, ըստ երևութիւն, վերոլիշեալ թիւրիմացութեան պատճառը:

Մի քանի խօսք էլ թարգմանութեան լեզւի մասին և մեծք վերջացրած կարող ենք համարել մեր ասելիքը Ռոսկոի հալերէն թարգմանութեան մասին: Ընդհանրապէս լեզուն հասկանալի և կոկ է, բայց և ալնապէս պատահում են անլաշող խօսքեր և դարձածներ, որոնցից մի ալն մէկը առաջ կը բերենք: Օրինակ մի քանի տեղ կարդում ենք թէ ալս ինչ կամ ալն ինչ մարմինը ազատ վիճակով չէ գտնուում բնութեան մէջ. աւելի լաւ է «ազատ դրութեան մէջ» ասել:

Վերջապէս ուղղագրութեան մէջ չէ պահպանւած միաձևութիւն. երբեմն «վ» է ընդունւած և երբեմն «ւ». — «ալլովում է» և «ալլում է» և ալլ ալապիսի հակասութիւններ: Սըրբագրութիւնն էլ անխնամ է արած, Թէպէտ և գրքի սկսբում դրած է ուղղելիք վրիպակների ցանկը, բայց էլի մնացել են չ'ուղղւած բառակաշին սխալներ, որ համբալկներին կարող են մոլորեցնել. օր. ցինկի նշանը Fe է տպւած փոխանակ Zn և ալն:

ՄԻԻԷ-ՏԷ-ԱՆԳԷ-ԽԷ